

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 41

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎԱՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի 2021

թվականի տարեկան բյուջեում: Զեկուցողը մասնավորապես նշեց, որ նշված փոփոխության հիմնական պատճառը հանդիսանում է բյուջեի նախորդ տարվա ազատ մնացորդի տեղափոխումը համայնքի ֆոնդային բյուջե:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Հարցը զեկուցեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Վերջինս, մասնավորապես թվային արտահայտությամբ ներկայացրեց 2020 թվականի տարեկան բյուջեի եկամտային և ծախսային մասերի կատարողականները:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված 662-030 ծածկագրից 0.0722հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելուն և ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ կից ընդլայնվող հողամասերի սեփականատիրոջը օտարելուն:

Տրված հարցերին Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի հունվարի 27-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏԶՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ